«Արարատ քաղաքի Մովսես Գորգիսյանի անվան թիվ 2 Մանկապարտեզ »

ՀՈԱԿ –ի տնօրեն՝ Լ.Պողոսյանից

Շամս Գրուպ ՍՊԸ-ի տնօրեն

Մամե Հասանյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծարելու մասին

Ինչպես գիտեք 2022թ-ի փետրվարի 14-ին Արարատ քաղաքի Մովսես Գորգիսյանի անվան թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի և Շամս Գրուպ ՍՊԸ-ի միջև կնքվել է ապրանքի մատակարարման ԱՔ2Մ-ԳՀԱՊՁԲ-22/01 պայմանագիրը, համաձայն որի Դուք ստանձնել եք պարտավորություն պատշաճ կերպով մատակարարել սննդամթերքի այն չափաբաժինները, որոնցով որ հաղթող եք ճանաչվել նախապես հայտարարված գնման ընթացակարգի ժամանակ (պայմանագրի հավելված 3):

Սակայն մեր համատեղ գործունեության առաջին իսկ օրվանից ակնհայտ նկատելի դարձավ Ձեր անփույտ և անպատասխանատու աշխատառոը, մասնավորապես մատակարարման ծամկետների խախտում, անորակ, ստանդարտներին և պայմանագրի պահանջներին չբավարարող սննդամթերք, հատկապես կաթնամթերքի մատակարարում և այլն:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հաշվի առնելով այն կարևորագույն հանգամանքը, որ մենք գործ ունենք մանկահասակ երեխաների հետ, ինչպես նաև հիմք ընդունելով ԱՔ2Մ-ԳՀԱՊՁԲ-22/01 պայամանագրի 2.1.7 կետը, մենք որպես գնորդ որոշում ենք լուծել պայմանագիրը ամբողջությամբ և ձեռնարկելու ենք պայմանագրով և հրավերով նախատեսված համապատասխան միջոցներ, պայմանագիրը միակողմանի լուծելու արդյունքում առաջացած Ձեր պարտավորությունների կատարման համար:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները Արարատ քաղաքի Մովսես Գորգիսյանի անվան թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

<<Արարատ քաղաքի Մովսես Գորգիսյանի անվան թիվ 2 մանկապարտեզ >>

ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Լ.Պողոսյան

15.03.2022թ